

ԽՈՍՔԻ ՃՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃՇԳՐՏՈՒԹՅՈՒՆ

ԼԵՎՈՆ ԵԶԵԿՅԱՆ

Խոսքի արժանիքներն ու թերությունները կարող են ճշգրտվել միայն լեզվական նորմայի (չափակարգ) պարզաբանման և սահմանման դեպքում, այսինքն՝ նախ և առաջ անհրաժեշտ է որոշել գրական լեզվի, հատկապես լեզվի տվյալ փուլում ընդունված օրինաչափություններն ու համակարգը, որոնք պարտադիր են գրավոր և բանավոր հաղորդակցման գործընթացում: Լեզվական նորմայի ըմբռնումը տարբեր սահմանումներ ու մեկնաբանություններ ունի: Ամենից առաջ այն պայմանավորված է գրական լեզվի առկայությամբ և սերտորեն առնչվում է նրա հետ, այլ կերպ ասած՝ լեզվական նորման գործում է միայն այն դեպքում, երբ առկա է գրական լեզուն, կամ տվյալ համազգային լեզուն ունի գրական լեզվի մակարդակ ու գործառույթ: Լեզվական նորման լեզվի զարգացման տվյալ փուլում գրական լեզվի բառապաշարի և քերականական իրողությունների ընդունված համակարգն է:

Այս առումով լեզվական չափակարգը սերտորեն առնչվում է «համակարգ» հասկացությանը: Ուստի և կարևոր է ճշգրտել, թե ինչպիսի հարաբերության մեջ են գտնվում դրանք միմյանց նկատմամբ: Որոշ լեզվաբաններ (Ա. Ա. Լեոնտև և այլք) կարծում են, որ լեզվական նորման անհամակարգ է, այսինքն՝ այն չի առնչվում որևէ համակարգի հետ, մյուսները (Վ. Ա. Ջվեգինցև) նորման համարում են լեզվական գործող օրենքների սահմաններից դուրս, այսինքն՝ լեզվական նորման մարդու, անհատի նպատակադրված գործունեության արդյունքն է այն դեպքում, երբ լեզվի օրենքները օբյեկտիվորեն գոյություն ունեն անկախ խոսողի կամքից:

Խոսքը հաղորդակցման ամենամեծ միավորն է իր ընդհանուր և մասնավոր դրսևորումների բազմազանությամբ: Խոսքի հետ հավասարապես կիրառվում է ոչ միայն լեզուն որպես որոշակի հաղորդակցման համակարգ, այլև նկատի է առնվում առանձին անհատների խոսքն իր բոլոր անհատական յուրահատկություններով և անհատական շեղումներով: Խոսքից հետո այս համակարգում հաջորդ ոլորտն արդեն նորման է, որը և հենվում է ոչ միայն քերականական կանոնների և օրենքների, այլև հաճախ այդ օրենքների և կանոնների շեղումների վրա: Այսպես՝ մի շարք անկանոն բայեր (*ուտել, լինել*), ըստ խոնարհման համակարգի ընդունված օրինաչափությունների, անցյալ կատարյալ ժամանակաձևում պետք է խոնարհվեին *ուտեցի և լինեցի* ձևերով, բայց նշված բայերը, շեղվելով խոնարհման ընդհանուր կանոններից, անցյալ կատարյալում լինում են՝ *կերա, եղա*: Սա անշուշտ շեղում է ընդհանուր համակարգից, բայց այս ձևերն ընդունված են և նորմատիվ: Այնպես որ համակարգը որոշակի կախման հարաբերության մեջ է գտնվում լեզվական ընդունված նորմայից: Ըստ այս

մոտեցման՝ նորման գտնվում է խոսքի և համակարգի միջև, ուստի և լեզվական նորման չի կարող անհամակարգ կամ օրենքից դուրս լինել, քանի որ այն ամենից առաջ առնչվում է գրական լեզվին:

Լեզվական նորման պատմական կարգ է. այն լեզվի զարգացման տարբեր փուլերում տարբեր դրսևորումներ կարող է ունենալ: Այսպես՝ եթե 19-րդ դարի կեսին արգելական հրամայականի ձևերը կազմվում էին *մի գցիլ, մի խոսիլ* և այլ կառույցներով, հետագայում դրանք փոխարինվում են *մի գցիր, մի խոսիր* ձևերով: Կամ՝ այսօր կարծես թե աստիճանաբար գործածությունից դուրս են գալիս «*չ*» ածանց ունեցող սոսկածանցավոր բայերը, որոնք գործածվում են ավելի շատ «*ն*»-ով, ինչպես՝ *թռչել-թռնել, կպչել-կպնել, դիպչել-դիպնել* և այլն: Ավելի գործածական են դառնում նաև բարբառային «*ա*»-ով ձևերը սահմանական եղանակի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքում, որոնք, անշուշտ, մերժելի ձևեր են, հնարավոր է, որ հետագայում դրանք դառնան նորմատիվ: Նորման հաճախ կարող է հենվել ոչ միայն ընդունված լեզվական կանոնների, նրա օրինաչափությունների, այլև հաճախ՝ այդ օրենքների ու կանոնների շեղումների վրա: Այսպես՝ երբ արտասանական համակարգում *ր*-ից հետո *բ, գ, դ, ձ, ջ* ձայնեղ բաղաձայնները արտասանվում են որպես շնչեղ խուլեր՝ *փ, ք, թ, ց, չ*, սա անշուշտ շեղում է, բայց ընդունվում է իբրև նորմա: Նույնը վերաբերում է նաև որոշ անկանոն բայերի անցյալ կատարյալի կազմություններին՝ *ուտել-կերա, լինել- եղա, գալ- եկա* և այլն:

Այնպես որ լեզվական ընդունված ընդհանուր համակարգից նկատելի շեղումները աստիճանաբար դառնում են կանոնական, նորմատիվ իրողություններ:

Այսպիսով, երբ ընդհանուր առմամբ որոշում են լեզվական նորմայի սահմաններն ու չափանիշները, հնարավոր է դառնում որոշակիորեն ճշգրտել խոսքի արժանիքներն ու թերությունները:

Ըստ այդմ՝ խոսքի արժանիքներն են ճշտությունը, ճշգրտությունը, պատկերավորությունն ու արտահայտչականությունը, հարստությունը, պարզությունը, հակիրճությունը և այլն:

Որոշ լեզվաբաններ հաճախ նույնացրել են խոսքի ճշտություն և ճշգրտություն հասկացությունները: Այսպես՝ Պ. Պողոսյանը նշում է, որ խոսքի ճշտություն ասելով՝ հասկանում ենք նրա բովանդակության ճշտությունը, սակայն դրա հետ մեկտեղ՝ ինչպես քերականական, այնպես էլ խոսքի կառուցման կանոնների ճշտությունը: Բովանդակության ճշտություն ասելով՝ հասկանում ենք նաև փաստերի ու փաստարկների, տարեթվերի, եղելությունների, ժամանակների, իրական-պատմական անձերի, աշխարհագրական և այլ անվանումների ճշգրտությունը, իրերի և երևույթների պատճառակցական կապերի, փոխկապվածության և զանազան առնչությունների ճիշտ արտացոլումը և այլն:

Պարզ է, որ նման ձևակերպումներում նույնացվում են ճշտություն և ճշգրտություն հասկացությունները: Խոսքի ճշտությունը բնորոշ է և պարտադիր գործառական բոլոր ոճերին, և այն միայն գիտական ոճի մենաշնորհը չէ: Խոսքի ճշտությունը և ճշգրտությունը խոսքի տարբեր արժանիքներ են, նրանք չեն նույնանում և որոշակիորեն տարբերվում են միմյանցից: Խոսքի ճշտությունը հաղորդակցման գործընթացի կարևոր, զուցե և գլխավոր հատկանիշն է, քանի որ դրանով են պայմանավորված խոսքի

մյուս արժանիքները և հատկապես փոխադարձ ըմբռնումը և խոսքի միասնականությունը:

Խոսքի ճշտությունն ամենից առաջ ապահովում է գրական լեզվի նորման, նրա բառապաշարի և քերականական իրողությունների տեղին, ճիշտ գործածությունները: Խոսքի անճշտությունը, բնականաբար, շեղում է գրական լեզվի նորմայից: Խոսքի ճշտությունը լեզվական կառույցների և գործող գրական լեզվի համապատասխանությունն է: Խոսքի ճշտության համար կարևոր է սահմանել հետևյալ բանաձևը՝ լեզու-խոսք. այսինքն՝ լեզվական միավորների ճիշտ և համապատասխան գործածությունը խոսքային գործընթացում: Ուրեմն՝ խոսքը ճիշտ է, եթե խոսողը, հաղորդողը տիրապետում է տվյալ գրական լեզվի բառապաշարային և քերականական իրողություններին և դրանք ճիշտ է գործածում խոսքում (հաղորդակցման գործընթացում):

Եթե խոսողը գիտի, որ *հպարտանալ* բայը պահանջում է խնդիր գործիական հոլովով, նա պետք է կառուցի հետևյալ նախադասությունը՝ *Ուսուցիչը հպարտանում է իր աշակերտով*, բայց ոչ՝ *աշակերտից*. դա է լեզվական նորմայի պահանջը, կամ՝ *սպանվել* կրավորական սեռի պահանջով բառը պետք է դրվի բացառական հոլովով՝ պատասխանելով «ու՛մի՞ց» հարցին՝ *սպանվել զինվորից* կամ *զինվորի կողմից*:

Այս դեպքում, եթե արդեն գործում է լեզու-խոսք բանաձևը, ուրեմն խոսքը ճիշտ է:

Մինչդեռ այլ են խոսքի ճշգրտության չափանիշները: Դեռևս անտիկ շրջանում հնագույն մտածողները խոսքի գեղեցկության կարևորագույն չափանիշներ են համարել խոսքի պարզությունը և ճշգրտությունը: Յուրաքանչյուր հաղորդող (գրող և խոսող) պետք է ոչ միայն լավ խոսի, այլև պարզ, ճիշտ և ճշգրիտ մտածի: Ուրեմն, ճշգրտությունը նաև մտածողության կարևոր պայման է: Խոսքի ճշգրտությունը ամենից առաջ պետք է հենվի խոսք-մտածողություն և խոսք-իրականություն հարաբերության վրա: Խոսքի ճշգրտությունը պայմանավորված է նաև առարկայի և այդ առարկան արտահայտող հասկացության կամ բառի համապատասխանությամբ: Յուրաքանչյուր բառ պետք է ճշգրիտ արտահայտի այն իրողությունը, որը ինքը անվանում է: Այս դեպքում արդեն ճշգրտության համար գործում է իրականություն-լեզու-խոսք բանաձևը: Ճշգրտությունը որպես խոսքի արժանիք հենվում է խոսք-լեզու կապի և նրանց հարաբերության վրա:

Գրավոր և բանավոր հաղորդակցման գործընթացում խոսողը պետք է ձգտի հասնել առարկաների և այդ առարկաներն արտահայտող բառերի համապատասխանությանը: Որպեսզի խոսքը ճշգրիտ լինի, խոսողը պետք է ճշգրիտ իմանա այդ իրողությունը, առարկան, հասկացությունը, որ ներկայացնում է և ընտրում համապատասխան բառեր կամ բառակապակցություններ:

Պատահական չէ, որ դեռևս Լ. Ն. Տոլստոյը գրել է. «Եթե ես արքա լինեի, կիրապարակեի մի այնպիսի օրենք, որ այն գրողը, որը գործածում է այնպիսի բառեր, որոնց նշանակությունը չգիտի, զրկվի գրելու իրավունքից և ստանա մտրակի հարյուր հարված»:

Խոսքի ճշգրտության սահմանումից պարզ է դառնում, որ այն որպես խոսքի արժանիք առաջին հերթին կապված է լեզվական համակարգի բառապաշարային ոլորտի հետ:

Ճշգրտության կարևոր նախապայման է նաև խոսքի տրամաբանականությունը, որը հենվում է պատճառահետևանքային կապի վրա: Պատճառահետևանքային կապն արտահայտվում է լեզվական տարբեր միջոցներով՝ հիմնականում բարդ ստորադասական նախադասության մեջ տարբեր բնույթի (պատճառի, հետևանքի, նպատակի և այլն) երկրորդական նախադասություններով, զուգադիր շաղկապներով (*եթե ... ապա, քանի որ ... ուրեմն, ոչ թե ... այլ, ոչ միայն ... այլև*) և այլն: Այսպես, երբ նշում ենք, որ առարկա ցույց տվող բառերը կոչվում են գոյական անուններ, և հետո՝ *Ծաղիկը ցույց է տալիս առարկա, ուրեմն ծաղիկը գոյական անուն է*: Այս դեպքում արդեն ապահովված են խոսքի ճշգրտությունը, տրամաբանականությունը, որոնք և հենվում են պատճառահետևանքային կապի վրա:

Խոսքի ճշգրտության չափանիշները տարբեր են գործառական տարբեր ոճերում: Բոլորովին այլ է ճշգրտությունը գիտական կամ պաշտոնական ոճերում, այլ՝ գեղարվեստական ոճում:

Գեղարվեստական ոճում, մասնավորապես գեղարվեստական թարգմանության մեջ միանգամայն տարբեր են ճշգրտության չափանիշները և նրանց նկատմամբ ներկայացվող պահանջները:

Գեղարվեստական ոճում ու թարգմանության մեջ ճշգրտությունը կարող է լինել նաև հարաբերական: Այսպես՝ եթե Րաֆֆու «Սամվել» վեպում Սամվելը սպանում է իր հարազատ ծնողներին, կարող է և իրականում ճշգրիտ չլինել, բայց հեղինակը գրական, գեղարվեստական այս կամ այն նպատակներով դիմում է նշված իրողությանը, նշված հնարանքին:

Կամ՝ թարգմանության տեսաբան Կ. Զուկովսկին թարգմանությանը նվիրված իր ուսումնասիրություններից մեկում մի ամբողջ գլուխ նվիրել է տվյալ խնդրին և վերնագրել «Անճշգրիտ ճշգրտություն» («Неточная точность»):

Այստեղ խոսքը վերաբերում է հատկապես այսպես կոչված բառացի կամ տողացի թարգմանությանը, որի պատճառով գեղարվեստական թարգմանության մեջ հանդիպում ենք անճշգրիտ ճշգրտության: Այս երևույթը հատկապես հանդիպում է դարձվածքների թարգմանության ժամանակ, երբ թարգմանիչը փորձում է դարձվածքը ներկայացնել բառացի թարգմանությամբ, մի բան, որը բոլորովին հանձնարարելի չէ, քանի որ յուրաքանչյուր դարձվածք սերտորեն կապված է տվյալ ժողովրդի լեզվամտածողության հետ, այն դժվար է նույնությամբ ներկայացնել մեկ այլ լեզվով: Կան դարձվածքներ, որոնք նույնությամբ համարժեք չեն կարող թարգմանվել:

Ս. Եսենինը իր բանաստեղծություններից մեկում գրում է. «С разбойниками жарили спирт»: Հայ թարգմանիչներից մեկը թարգմանել է. «Ավազակների հետ սպիրտ էին տապակում», մի բան, որ խիստ բառացի է և հայերենի համար ընդունելի չէ: Բայց ահա մեկ այլ թարգմանիչ նույն նախադասությունը թարգմանել է. «Ավազակների հետ սպիրտ էինք կոնծում»: Այս դեպքում նշված թարգմանությունն ընդունելի է և հարազատ հայերենի լեզվամտածողությանը: Նույն առումով էլ բառացի չեն կարող թարգմանվել հայերենի *աչքդ լույս, աչքը մտնել, աչքից ընկնել, խելքը գլուխը հավաքել* և նման բազմաթիվ դարձվածքներ: Հակառակ դեպքում մենք նորից կհանդիպենք անճշգրիտ ճշգրտության: Խոսքի ճշգրտության տարբեր շեղումներ կարող են նկատվել նաև առօրյա-խոսակցական ոճում, բանավոր

խոսքում: Այսպիսով խոսքի ճշգրտությունը որպես խոսքի արժանիք հենվում է խոսք-գիտակցություն, խոսք-իրականություն, խոսք-լեզու հարաբերությունների վրա և հիմնականում բնորոշ է գիտական ու պաշտոնական ոճերին:

ЛЕВОН ЕЗЕКЯН – *Правильность и точность речи.* – Правильность и точность – главные и при этом разные коммуникативные качества речи. Они обусловлены языковой нормой. Правильность определяется на основе соотношения “язык – норма – речь”, а точность – на основе соотношения “язык – мышление”, “действительность – язык – речь”.

LEVON EZEKYAN – *Grammaticality and Accuracy of Speech.* – Grammaticality and accuracy are the main communicative qualities of speech. They are conditioned by the linguistic norm of speech. Grammaticality and accuracy are different qualities of speech. The grammaticality of speech can be determined on the basis of the correlation “language – norm – speech”, and the accuracy – on the basis of the correlations “language – mentality” and “reality – language – speech”.